

ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ՓԱՐԻԶԻ „ԱՄԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ”

Société Asiatique

Անցեալ ԺԹ. դարի սկզբները եւրոպայում առ հասարակ հետաքրքրվում էին արևելեան ուսմունքով (études orientales). Ասիայի կամ ընդհանրապէս արևելքի՝ լեզուների, լրօնների, պատմութեան, աշխարհագրութեան և բարքի ուսումնասիրութիւնը զրաւում էր ոչ միայն մասնագէտ գիտնականներին, այլ նաև դիւնագէտներին և ազնուականներին:

Այս հանգամանքներում հիմնուեց Պարիզում, 1822-ին առաջին լուրջ ուսումնական ընկերութիւնը՝ յատկապէս արևելքը ուսումնասիրելու համար, որ կոչուեց «Ասիական Ընկերութիւն» (Société Asiatique). Հիմնագիրներն էին ոչ միայն մասնագէտ արևելագէտներ, ինչպէս Սիլվէստր դը Սասի (Silvestre de Sacy), Վիվիեն դը Սէն Մարտէն *) (Wivien de Saint Martin), Կլավոր

*) Մանօթ. Սէն Մարտէն յայտնի է առանձնապէս նաև իրեն կովկասագէտ. սա ունի գրած ի մէջ այլոց, 1) Recherches sur les populations primitives et les plus anciennes traditions du Caucase, 2) Mémoire historique de la géographie ancienne du Caucase, 3) Fragments d'une histoire des Arsacides.

(Klaproth) և այլն, այլև նշանաւոր ազնուականներ, Դքսուհի Դիւրա, կոմս Դօդըրիվ, բարօն Պասքիէ, կոմս Լանժընէ, ինչպէս նաև յայտնի պրօֆէսօրներ: Իսկ Օրլէանի գուքսը համաձայնեց իր հովանաւորութեան տակ առնել նորածին Ընկերութիւնը: Այն թուականից ի վեր Ասիական Ընկերութիւնը շարունակում է իր գոյութիւնը՝ շատ թանգարին ծառայութիւն մատուցանելով արևելագիտութեան: Շատ նշանաւոր Թրանսացի գիտականներ մասնակցել են և մասնակցում են նրան:

Առաջին նախագահն էր վերոյիշեալ Սիլվէստր դը Մասին, որին յաջորդեց Ժօրէր *): Աշխարհանշակ Ռենան նոյնպէս եղել է նախագահ այս Ընկերութեան: Այժմ Ընկերութեան նախագահն է յայտնի արևելագիտ Սէնար (Senart):

Ասիական Ընկերութիւնն ունի իր յատուկ օրգանը (Journal Asiatique) (Ասիական Լրագիր), որ սկսած է հրատարակուիլ 1822-ին և շարունակվում է մինչև հիմայ: Նա հրատարակվում է սէրիաներով, երկու ամիսը մի գիրք:

1909-ի վերջին գիրքը նոյեմբեր — Դեկտեմբեր՝ հրատարակուած է իրրև Փ. երրորդ սէրիայի ժող. հատորի 3—թիւը: Ամէն մի հատոր սովորաբար բաղկացած է 3 գրքից, (150-ից մինչև 200 էջ): Journal Asiatique այս ձեռով մինչև հիմայ 150 հատոր է հրատարակուած, որոնք մոխ շահմարան են ընդհանուր Ասիայի վերաբերեալ ուսումնասիրութիւնների և տեղեկութիւնների: Ընկերութիւնն իր անդամների թւռմն ունեցել է նաև հմուտ հայագէտ գիտնականներ: Այժմ էլ ունի երկու ծանօթ հայագիտ ուսումնականներ, պ. պ. A. Meillet և Frederic Macler: Առաջինը՝ պ. Մէյիէ առանձնապէս յայտնի է իր գրաբար հայերէնի համեմատական քերականութիւնովն, որ ապօւած է Վիեննայում, 1903 Մխիթ. տպ. և նուիրուած է հանգուցհալ մեծ բանասէր Այտընեանի յիշտակին: (Esquise d'une grammaire comparée de l' arménien classique), Իսկ պ. Մակլէր ունի հետեւալ գրուածքները: 1) Moïse de Khoren et les travaux d'Auguste Garriére, Paris 1902, 2) Choix de fables arméniennes attribuées à Mkhitar Goch, Paris 1902, 3, Extrait de la chronique de Maribas Kaldooy (Մար-Աբաս Կատինմ), Paris 1903, 4) Catalogue des manuscrits arméniens et georgiens

*.) Մանոթ. Pierre Amédée Jaubert արևելագէտ, Նայոլէօն Ա-ի դեսպանը Կ.-Պէլում: 1818-ին եկած է Կովկաս, եղած է Թիֆլիսում և այստեղից մեկնած է Աստրախան: Նա ունի հրատարակած ի մէջ այլոց Voyage en Arménie et en Perse (2-դ ապագը. 1860):

de la Bibliothéque nationale... Paris 1908. և 5) Mosaïque Orientale I Epigraphica. II historica. Այս վերջին, պատմական բաժնում նա հետաքրքրական տեղեկութիւններ է տալիս իմէջ այլոց կուղովի-կո՞ ԽVI-ի ժամանակ Մարսիլիայում գոյութիւն ունեցող, հայկա-կան տպարանի մասին:

Թէ Մեյիէ և թէ Մակլէր շարունակում են հետաքրքրուել հայ-կական կեանքով: Պ. Մէյիէ՝ Journal Asiatique-ի 1909 Սեպտ.—Հոկտ. համարում խօսելով էջմիածնի մասին (Armenie բաժնում էջ 375) յոյս է յայտնում, որ իզմիրեան կաթողիկոն ուշադրու-թիւն կը դարձնէ նաև իր եկեղեցոյ և ազգի պատմութեանը: Այս ուղղութեամբ էջմիածնը բազմաթիւ գործեր ունի կատարելիք, ասում է յարգելի Ֆրանս. գիտնականը. հրատարակել Մեսրոպ Վ.-Տէր-Մովսիսիանի պատրաստած ձեռագիրների ցուցակը, շարու-նակել «Պատմագիրք Հայոց» գեղեցիկ հաւաքածոն և վերջապէս լոյս ընծայել այն բոլոր հայկական բնագիրներն, որոնք կարող են օգնել Թաղկեդոնի Տիեզերական ժողովի նկատմամբ վէճերի լուսաբանութեան: «Այս բնագիրներն, ասում է պ. Մէյիէ, մինչև հիմայ դի ամամբ (un peu à dessein) անուշագիր են թողնուել. հարկաւոր է այժմ հրատարակել, որովհետև այդ վէճերը հայոց եկեղեցու և ազգի պատմութեան մէջ մեծ դեր են խաղացել. Գա-լուստ Տէր-Մկրտչեան արդէն մի քանի հատ հրատարակել է. այս աշխատութիւնը պէտք է մէթօդաբար շարունակել: Եթէ նոր կա-թողիկոսը քիչ հետաքրքրուէր այս ձեռնարկութիւններին, անկաս-կած նրանք կարճ միջոցում ի կատար կածուէին...»:

Իսկ պ. Մակլէր անցեալ տարի, 2 ամիս (Օգոստ. և Սեպտ.) անցկացրեց Կովկասում (գլխաւորաբար էջմիածնում) և զբաղուեց առանձնապէս Ս. գրքի Հայ թարգմանութեան վերաբերեալ գրչա-պիրներով: Նա մանրամասն լուսանկարեց էջմիածնի նշանաւոր հին Աւետարանը:

Ասիական Ընկերութիւնն իր 10 Դեկտ. 1909 ընդհ. ժողո-վում որոշած է փոխանակել Journal Asiatique, Հայոց Ազգ. Ընկե-րութեան միջոցներով և պ. Ե. Լալայեանցի խմբագրութեամբ հրատարակող «Ազգագրական Հանդէսի» հետ:

Ասիական Ընկերութիւնը նպաստ է ստանում Ֆրանս. պե-տական և ազգ. հիմնարկութիւններից. բացի դրանից նա ունի և իր հիմնական դրամագլուխը: 1910 ի նախահաշիւը ցոյց է տա-լիս, որ նա սպասում է ընդհանուր մուտք 24,515 ֆրանկ: Այս գումարից 5590 ֆր. գոյանում է անդամավճարներից (տարեկան 30 ֆր. իսկ մշտական 400 ֆր.) և 2900 ֆր. բաժանորդագներից: Մնացածն ստացվում է դրամագլուխ տոկոսներից և Ֆրանս. կառա-

վարութիւնից (5000 ֆր.), Վերոյիշեալ 24,515 ֆր. կէսը ծախս-վում է Journal Asiatique-ի հրատարակութեան, մասցորդը՝ գրա-դարանի համար գրքեր գնելու և գրասենեակի ծախքերին է յատ-կացված:

ՍԱՐՈՒԻՆԱՆ

Անդամ Ասիական Ընկերութեան:

Քիչութեան
Ապրիլ 1910 թ.

**Сборникъ матеріаловъ для описанія мѣстностей и племенъ
Кавказа. Выпукъ сороковой, 1909 г.**

Կովկասեան ուսումնարանական շրջանի հրատարակած ժողովածութիւնը այս հատորը բաղկացած է 475 էրեսից և պարունակում է 11 յօդուած, որոնք ունին հետեւեալ բովանդակութիւնը. 1) Հնա-գիտական-պատմական, 2) լեզուարանական, 3) աշխարհագրական և 4) ազգագրական: Առաջին տեսակի յօդուածների մէջ աչքի է ընկնում Ե. Թաղայիշվիլու «Վըաց մէջ գրագիտութիւն տարածող ընկերութեան մատենագրանի ձեռագրերի ցուցակը և նկարա-գրութիւնը», որը նախկին համարներում տպագրւած ցուցակի շարունակութիւնն է: Այս համարում Թաղայշվիլին նկարագրելով 51 ձեռագրի, մեծ մասամբ Վախտանգի օրէնսգրքի, նոցա արտա-քին նկարագրութեան հետ տալիս է և բովանդակութեան ցանկը: Նկարագրած գրչագրերից աչքի է ընկնում Շուրբերդի ժողովա-ծուն, որը մեր հեղինակի կարծիքով ժամանակակից գործ պէտք է լինի:

Բաւական մեծ տեղ է բռնում (1—XII—114) Ա. Դիրքի լեզուա-րանական ուսումնասիրութիւնը: Դիրքը 1903և1904 թուականներին ճանապարհորդել է Դաղստանում. այս ճանապարհորդութիւնների ժամանակ նա, իւր ասելով, կարողացել է ուսումնասիրել տան և մէկ կ լեզու ծթէ չեք հաւատում կարդացէք նորա ուսում-նասիրութեան յառաջաբանը և դուք կ'իմանաք, որ Դաղստանի համարեա ամեն գիւղ ունի իւր առանձին լեզու: Զը կար-ծէք, որ հեղինակը լեզու բառը սխալմամբ է գործ ածել բարբառ բառի տեղի: Իր ասածները հաստատելու համար հեղինակը մէջ է բերում Անդի, Բուռլիխինի, Գողորէրի, Կարագի, Ախվախի, Բա-գուլալի, Չամալալի, Տինդալի, Խվարաշինի, Դիդօի և Կապուչինի լեզուների քերականութիւնը և բառարանը:

Ընդարձակ տեղ է բռնում (1—XI—164) և Կ. Հանի ուսում-նասիրութիւնը. «Կովկասեան աշխարհագրական անունների բա-ցատրութեան առաջին փորձը»:

Խնչքան զգալի է այս օրինակ մի ուսումնասիրութեան պահանջմանը, այնքան ցաւալի է, որ պարոն Հանը չիմանալով կովկասեան լեզուներից և ոչ մէկը՝ ձեռնարկել է այսպիսի մի սպատասխանատու գործի, յոյս դնելով միայն իւր ծանօթ Կովկասցիների վերայ: Հաւատալով վերջիններիս տուած տեղիկութիւններին՝ պարոն Հանը սխալում է շատ յաճախ: Օրինակի համար վերցնենք հէնց առաջին երեսը. այստեղ Տիգրանակերտը դարձել է Տիգրան օ կերտ, իսկ Քասախ գետը բացատրուել է իրրե քացակի գետ (յկսչար քեկա).

Աղքազրական ուսումնասիրութիւններից յիշել կարելի է Եղերովի տօնական բաղարձների և հայերի մասին և Գրերենցի «Գրերենի ղաղախների կենցաղից» յօդուածները:

Սմբ. 8. Աւետիսեան.

Կարլ Լէմանի նոր աշխատութիւնը Հայաստանի մասին.

(C. Lehmann-Haupt. Armenia einst und jetzt Berlin 1910
Լէման. Հայաստանը երբեմն և այժմ)

Առաջաւոր Ասիայի ուսումնասիրութիւններմբ հետաքրքրութեամբ հետաքրքրութեամբ վաղուց սպասում էին պրօֆէսօր Լէմանի գրքի լոյս տեսնելուն:

Լէմանը զանազան գիտական հրատարակութիւնների մէջ զետեղել էր յատուկ հազորդագրութիւններ այն հետախուզութիւնների մասին, որ նա արել էր իւր ճանապարհորդութիւնների միջոցին Առաջաւոր Ասիայի զանազան վայրերում: Բայց բոլորիս հետաքրքրում էր տեսնելնրա կատարած գիտական ամբողջ ճանապարհորդութիւնը նկարագրուած մանրամասնորէն:

Եւ ահա այսօր մեր առաջն է վաղուց սպասուած աշխատութիւնը, մի աշխատութիւն, որ արժանի է լուրջ ուշադրութեան այն բոլոր անձերի համար, որոնք շահագրգոռուած են Առաջաւոր Ասիայի ուսումնասիրութեան զործով.

Գերմանական գիտնականը իր ճանապարհորդութիւնը Հայաստանում կատարել է 12 տարի սրանից առաջ և ժողովել բազմաթիւ նիւթեր Հայաստանի և հայերի մասին: Այժմ լոյս է տեսել նրա ուսումնասիրութիւնների առաջին մասը մի մեծ հատորով:

Մամուլին է յանձնուած և նրա երկրորդ հատորը:

Լէմանի ներկայ երկասիրութիւնը արդարե մի նոր գանձ է այն թանգարանի մէջ, որ նուիրուած է հայկական ուսումնասիրութեան:

Գիտնական ճանապարհորդը ներկայ առաջին հատորում նը-կարագրում է իր ճանապարհորդութիւնները Անդրկովկասում, Պարսկաստանում և Թիւրքիայում:

Ուղերութեան գիծը եղել է այսպէս. Վլադիկավկազից դէ-պի Թիֆլիս, ուսումնասիրութիւններ Թիֆլիսի շրջակայքում, ճա-նապարհորդութիւն դէպի Գանձակ, ուսումնասիրութիւններ Գան-ձակի և Գետաբէկի շրջաններում, ուղերութիւն Ազստաֆայից դէպի Սևանայ լիճը, Երևան, Ջուլֆա, Թաւրիզ, Միանդուար, Ռւրմի, Դիման, ապա Վան, Բիթլիս, Բաբիլ, Ջեղիրէ. Տիգրա-նակերտ, Արարէկիր, Էգին, Կեմախ, ուսումնասիրութիւններ հնա-գիտական և կենցաղագրական բոլոր շրջաններում:

Ներկայ հատորը, որ բազկացած է աւելի քան 550 մեծա-դիր երեսներից, պարունակում է իր մէջ 117 նկարներ և առան-ձին կցուած Հայաստանի քարտէզը ճանապարհորդական ուղեգծով:

Գերմանական՝ ճանապարհորդը իւր ուսումնասիրութիւնների մէջ աշխատում է մնալ գիտական հողի վրա և լինել անաչառ գէպի ազգագրական և ժամանակակից հետաքրքրութիւն պարու-նակող հարցերը, կենտրոնացրած լինելով իր գլխաւոր ուշադրու-թիւնը հնագիտական հետազոտութիւնների վրա, նա միայն հա-րեանցօքն կանգ է առնում ժամանակակից կեանքի մի քանի քնորոշ երևոյթների վրա:

Լէմանի ուսումնասիրութեան հօրիզոնը չափազանց ընդար-ձակ է վերցուած և անկասկած, եթէ հեղինակը ունեցած լինէր իր տրամադրութեան տակ աւելի ժամանակ, նա ժողոված կը լինէր կրկնակի նիւթ, բայց նա աշխատել է սեղմել իւր ուսում-նասիրութիւնների երկրորդական մասերը. որպէս զի աւելի մեծ տեղ գրաւած լինեն և զարգացում ստացած լինեն այն մասերը, որոնք կազմում են նրա զիստաւոր հետաքրքրութեան և հետազօ-տութիւնների էութիւնը:

Աշխատութիւնը ունի մի գեղեցիկ կազմուած ներածու-թիւն, որը 32 երեսի վրա տալիս է ամփոփ տեղեկութիւն Հա-յաստանի գիրքի, պատմութեան, հնագիտութեան, եղած ուսում-նասիրութիւնների և հեղինակի կատարած գիտնական խուզար-կութիւնների մասին. Այդ ներածութեան ընթերցումը միան-գամից մտցնում է ընթերցողի մէջ հետաքրքրութիւն դէպի այն գաւառները, որոնք սիրելի են հեղինակի համար:

Այնուհետև գալիս են 16 գլուխներ, բաժանուած երկու դրքի:

Վերջումը զետեղուած են ընդարձակ ծանօթութիւններ։ Առաջին չորս գլուխներում պատմուած են ճանապարհորդի ապաւորութիւնները Անդրկովկասի շրջանում։ Մազմավիրական ճանապարհը, Թիֆլիսը, Վրաստանը իրանց առանձնայատուկ գըծերով, Գանձակի և Գետաբէկի շրջանները իրանց ազգագրական և հնագիտական նիւթերով, Արարատեան աշխարհը իր հնագիտական հարստութեամբ հայթայթել են ուսումնասիրութեան մեծ պաշար ճանապարհորդին։

Իսկ այն դիտողութիւնները և հետախուզութիւնները, որոնք կատարուել են Պարսկական և Թիւրքական Հայաստանում, բաց են անում սակաւածանօթ և մինչև այժմ մթութեան վարագոյրով ծածկուած տեղերի և իրերի պատկերներ մեր առաջ և լուսաբանում են անյայտ մնացած խորշեր Առաջաւոր Ասիայի անցեալ պատմութեան էջերից։

Լէմանի աշխատութեան լոյս տեսնելը մի զրական երկոյթ է հնագիտական, ազգագրական գրականութեան մէջ և, անկանած համար կը նպաստէ Առաջաւոր Ասիայի ուսումնասիրութիւնների ընդարձակման։

Ա. ՔԱՂԱՆԹԱՐ